«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Գրական դատ մեթոդի կիրառումը Ավ. Իսահակյանի քնարական բանաստեղծություններում
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Գայանե Մարտինի Պապինյան
ՄԱՐԶ	Լոռի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ստեփանավանի հ. 1 հիմնական դպրոց

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կրթական համակարգում անհրաժեշտություն է առաջանում նորովի մոտեցում հանդես բերել գրականության ուսուցման մեթոդաբանության նկատմամբ: ՈՒսուցչին վերապահվող կարևորագույն խնդիրներից մեկը կրթության բովանդակության կազմակերպումն է: Ուսուցիչը մի շարք գործոններ պետք է հաշվի առնի նյութի մատուցման ժամանակ:Յուրաքանչյուր նյութի մատուցումը պետք է լինի աշակերտակենտրոն, այսինքն ՝ նպատակը պետք է լինի գիտելիքների , հմտությունների , վերլուծական մտածողության զարգացումը և ոչ թե տեղեկատվություն հաղորդել:

Հետազոտական աշխատանքի հարցն այն է , թե ինչպիսի դատողություններ են անում աշակերտները քնարերգու բանաստեղծի ՝ սիրո երջանկությամբ թևավորվածպատանու նամակների և բանաստեղծությունների վերաբերյալ:Ժամանակակից ուսուցման ընթացքում կարևորվում է հետազոտական մեթոդների կիրառումը, որտեղ մեծ տեղ է կազմում աշակերտի ինքնուրույն ստեղծագործական աշխատանքը:

Աշակերտի գործուն մասնակցությունն ապահովող մեթոդների շարքում հետաքրքիր է գրական դատը:Այս մեթոդը աշակերտին հնարավորություն է տալիս հասկանալ տվյալ ժամանակաշրջանում ինչպես գրողի ու ստեղծագործության հերոսների ապրումային և գեղարվեստական ներաշխարհը, այնպես էլ տվյալ ժամանակաշրջանում տիրող իրավիճակը , բարքերն ու մշակույթը:

Ստեղծագործական ունակությունների զարգացմանն ուղղված խնդիրների լուծումը պահանջում է նոր տեխնոլոգիա , յուրահատուկ մեթոդների կիրառում:Բնականաբար ուսուցմանը ներկայացվող պահանջները նաև նոր ձևերի , ուղիների և եղանակների որոնում են ենթադրում:

Դպրոցում գրականության ուսումնասիրումը մեծապես նպաստում է մարդու մեջ հոգեկան այնպիսի գործընթացների զարգացմանը, ինչպիսիք են ՝ մտածողությունը , ուծադրությունը , երևակայությունը , հիշողությունը:

Ավ. Իսահակյանի սիրային քնարերգությունը մի ամբողջ սիրավեպ է նամակների ուղեկցությամբ , որը նպաստում է սովորողների գեղագիտական ճաշակի , բարոյական ճաշակի ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:Հարկավ անհրաժեշտ է խթանել աշակերտների հետաքրքրասիրությունը , ճանաչողական ակտիվությունը , որպեսզի յուրաքանչյուր սովորող իր կարողություններին և ընդունակություններին համապատասխան

արժեորի ավ. Իսահակյանի ապրած ժամանակահատվածը, նամակների և ստեղծագործությունների արժեքը:

Իմ նպատակը հավիտենական սիրո մեջ է, որ ապրում է իմ բոլոր ատոմների մեջ, որից ինձ ոչ ոք չի կարող զրկել… Նա կապրի իմ գերեզմանից հետո էլ դեռ իմ անմահ ատոմների հետ:

Ես երջանիկ եմ, որ ունեմ սիրո պես աստված:

Սիրուց հետո գոլորշիանալ, ոգիանալ, աստվածանալ և հավերժանալ, բայց որ այդ չկա, մեռնել, փոշիանալ…

Սերն իր բարձր առումով իր պոեզիայի առանցքն է: Առանց այդ սիրո ոչ մի բանաստեղծ չէր կարող քնար հնչեցնել:

Սիրել բոլորին, սիրել անչափ, լի կարեկցանքով, սիրել մինչև անձնազոհություն,- սա մի այնպիսի մեծ էգոիզմ է, որ միայն հերոսները կանեն: /Իսահակյանը սիրո մասին/

<<Հիշատակարան>>

Շիրակի բնությունը խիստ է և դաժան: Նա չունի հորդառատ գետեր ու ստվերա-խիտ անտառներ, գահավիժող անդունդներ ու բարձր լեռներ, սակայն հիասքանչ է Շիրակի երկինքը: Դա երևում է առավել չափով գիշերը, երբ կարծես վերանում է երկրի ու երկնքի անջրպետը, և մարդը զարմանալիորեն հաղորդակից է դառնում տիեզերքին: Ավետիք Իսահակյանի պոեզիան հայ գրականության յուրօրինակ <<Շիրակի երկինքն է >>:

Ավիկ Իսահակյան

Արարչագործ աստղի առաջ
Վշտոտ սիրտս բացեցի,
Հավերժության աչքի առաջ
Անհույս ու խոր լացեցի…

Բայազետցի պապի թոռը, ում հայրը Գյումրիում էր ծնվել, իսկ մայրը՝ Ալմաստը, հարս էր եկել Ղարսից, պիտի ինքն էլ դառնար Գյումրվա ծնունդ և իր մեջ կրեր Շիրակի երկնքի հմայքը: „Սիրելագույն Շիրակն ինձ համար տիեզերքի կենտրոն է եղել,- գրում է Իսահակյանը,- որովհետև այստեղ է, որ սկսել է բաբախել իմ սիրտը: Այստեղ եմ զգացել աշխարհը: Այս կենտրոնումն է սկիզբ առել իմ աշխարհաճանաչումը: Այստեղ եմ լսել ու սովորել մեր հոյակապ մայրենի լեզուն … „ :

Յուրաքանչյուր մեծ բանաստեղծի կյանքը մի յուրօրինակ ստեղծագործություն է:

Շիրակի դաշտավայրում սփռված պատմական – ճարտարապետական ոգեշունչ հուշարձանների գեղաքանդակ կամարների տակ խաղալով է ապագա բանաստեղծ- հանճարը

իր հոգու մկրտությունը ստանում: Հարուստ ներաշխարհով պատանին, որը հասցրել էր հասունանալ հայրենի չքնաղ բնության, ժողովրդական բանարվեստի զորեղ ներշնչմամբ, մարդկանց նկատմամբ դեռևս չաղարտված սիրո ու նվիրումի բերկրանքով, պիտի դառնար ժողովրդի մի մասնիկը, ձուլվեր ու ձուլեր նրան բոլոր թելերով:

Մաճկալ ես, բեզարած ես ,
Առը շուռ տու՛ր , շու՛տ արի.
Ծովի պես քրտնքած ես ,
Եզներն արձկի՛ , տուն արի՛:
Կաթի սերը քաշել եմ,
Դրել եմ հովին՝ սառի.
Ալ գոգնոցս կապել եմ,
Արի թառլան, թը՛ռռ արի:

Տեղ եմ գըցել շվաքում,
Քամին կուգա, զով կանի.
Լուսնի շողքն է մեր ծոցում,
Չափ տու՛ր, չափ ա՛ռ – շուտ արի՛:
Դաղրած, բեզարած յա՛ր ջան .
Ամպերն ելան, դե՛հ արի.
Բեզարած ջանիդ դուրբան,
Ծրտից թև առ, թե՛զ արի…

1893

Հին Գյումրին նվիրական զգացմունքների մի ամբողջ աշխարհ է զարթեցնում Իսահակյանասերի մոտ, սա այն քաղաքն է, ուր անցել են նրա կյանքի ամենաերջանիկ տարիները՝ մանկությունը, ուր ծնվել են նրա պոեզիայի առաջին տողերը, ուր սկիզբ է առել նրա մեծ սիրո տխուր պատմությունը, ուր ծրագրվել են բազում ռոմանտիկ երազներ…

Յուրաքանչյուր բանաստեղծի նամակագրական ժառանգությունը կազմում է նրա թողած գրական աշխարհի էջերից մեկը: Առավել քան հետաքրքիր են քնարական, խոհափիլիսոփայական ներաշխարհ ունեցող բանաստեղծի նամակները. որոնք իրենց մեջ ներառում են այն հույզերն ու ապրումները, այն հոգեվիճակներն ու զգացմունքները, որոնք Վարպետը արտահայտել է իր բանաստեղծություններում: Նամակների օգնությամբ ճանաչում ենք բանաստեղծի մարդկային կերպարը, աշխարհայացքը: Գրողի նամակները օգնում են գնահատելու նրա ստեղծագործության մի շարք կողմերը, գտնելու նրա պոեզյան սնող տրամադրությունները, որոնք նամակների մեջ արձակ շարադրանք են՝ բանաստեղծական մտապատկերների բովանդակությամբ:

Բանաստեղծությունը քնարական ստեղծագործություն է, որտեղ բանաստեղծի հույզերն են,տարբեր տրամադրություններով պայմանավորված հոգեվիճակները, և երբեմն դժվար է հասկանալ բանաստեղծական պատկերի ենթատեքստը:Այս առումով բանաստեղծի նամակները օգնում են հասկանալու բանաստեղծական պատկերի ներաշխարհը, որը նամակներում արտահայտված բանաստեղծի հուզաշխարհն է՝ տարբեր դրսևորումներով ու հարցադրումներով:

Ավետիք Իսահակյանը հայտնի է ոչ միայն թողած հարուստ գրական ժառանգությամբ, այլ բազմահազար սիրային պատմությունները: Վարպետի հմայքը ոչ մի կին չէր կարողանում մերժել: Նա կյանքում ունեցել է միայն մեկ մեծ,իսկական սեր, և այն էլ՝դժբախտ: Կարելի է ասել, որ բազմահազար կանանց միջոցով Իսահակյանը փորձում էր բուժել խոցը, լրացնել սրտի այն բաց տարածքը, որն առաջացրել էր նրա հեռավոր ազգական Շուշիկը:

Ավ. Իսահակյանի մեծ սերը <<Հիշատակարանում>> Շուշանիկ Մատակյանն է՝ Սահականուշյան դպրոցի սանուհին, բանաստեղծական խառնվածքի տեր էակ, որի նկատմամբ վեհ ու վեր երկրային զգացմունքներ է տածել բանաստեղծը ողջ կյանքում: <<Հիշատակարանում>> պահպանվել ենսիրած էակի հետ բախտորոշ հանդիպման մանրամասները. Որոնք օրագրի հեղինակը տարիներ անց, արդեն Շուշանի հետ գժտված և տենդագին հաշտության եզրերի որոնումներում, հոգևոր պոռթկման մի պահի արտագրել է մեզ չհասած էջերից: Զգացմունքները փոխադարձ էին, սրա վկայություններն էին սիրած աղջկանից ստացած նամակները, տեսակցություններից վերապրած

բերկրանքն ու հոգևոր ջերմությունը. <<Նրա>> մեջ տեսնում եմ իմ հոգեկան պատկերը՝ որոշ գույներով. ես <<Նրան>> սիրում եմ՝ իդեալական սիրո ամենաընդարձակ ծավալով… կյանքը թվում է ինձ անվերջ սեր…

Քնարերգությունը գրող-բանաստեղծի էության հայելին է, նրա հոգու և բանականության սինթեզը, ողջախոհության և խենթության հատման սահմանը, որից երբեք և ոչ մի ժամանակում չի նահանջում իսկական բանաստեղծը, չի երկնչում, չի խոնարհվում, չի ամաչում… Իսահակյանի քնարերգությունը հենց այս ամենի կրողն է՝ մեղեդային, անմիջական, վարակիչ, թանձր, բայց թափանցիկ, խորը, բայց լուսավոր, տաք և ավելի, քան յուրային :

Սիրել-ապրել-տանջվել կյանքի խորհուրդը այս է: Եվ սա տասնվեցամյա պատանու կյանքի փիլիսոփայությունն է միաժամանակ, ուր նա տոկալու, ստեղծագործելու տենչը անբաժան է համարում սիրուց և ճշգրիտ նախազգացումով կանխորոշում սեփական կյանքի ուղին՝ սիրել, ապրել, տանջվել: Ապրելու իմաստը ծայր է առնում սիրուց և ուշագրավն այն է, որ սերը պատանու գիտակցության մեջ ու պատկերացումներում միաձույլ է տառապանքի գաղափարին: Կյանքի էության նույնպիսի ընկալումը բնորոշ է նաև սիրած էակին, որի վկայությունն է նրա նամակից կատարված մեջբերումը՝ <<Տանջվել եմ ուզում…>> /Հ, 23/: Բանաստեղծի սերը, սակայն, ժամանակի հետ դարձավ շրջապատի բիրտ ու նյութապաշտ զոհը, ինչպես չսպիացող վերք, գալարվող ցավ ու տառապանք այն վերապրել է ողջ կյանքում:

1897 թվականին լույս է տեսնում Իսահակյանի << Երգեր ու վերքեր>> ժողովածուն: Այն իր բովանդակությամբ հաստատում է դեռևս 1892 թվականի մարտի 2- ին <<Հիշատակարանում>> բանաստեղծի գրած երդումը. << *Ես երդվում եմ իմ դավանած սրբություններով՝ իմ կամքի հզոր ուժով հաղթել արգելքներին և խոչընդոտներին. արհամարհել աշխարհային թովիչ կյանքը, նրա փառքն ու պատիվը միայն այն վեհ սեղանի համար, որի վրա բարձրանում է գիտությունը՝ անհաղթ, սուրբ և անմահ, ճշմարիտ գիտությունը>> :* Եվ նա Եվրոպայում էլ հավատարիմ մնաց իր ժողովրդական բանարվեստի ավանդներին: << Ժողովրդի սրտից ջուր խմած բանաստեղծի>> անհատականությունը հենց ժողովրդի հոգու և հոգեբանության հարազատ թարգմանը լինելու մեջ է, այդ հոգու կերտման, արարման նրբությունները հասկանալու մեջ է: Եվ եթե քաղքենիական բարքերի մոդայիկությամբ տառախող որոշ <<արվեստասերներ>> , փորձելով կարծիք հայտնել Իսահակյանի պոեզիայի մասին, ասում էին, որ այն <<հասարակ է>> , <<ախ ու վախ է>> , ապա ժողովուրդը՝ արվեստագետի լիիրավ պաշտպանն ու դատավորը, մեծ ցնծությամբ ու հոգու թրթիռով է ընթերցել ու ընթերցում իրեն այդքան մոտ, այդքան յուրային ստեղծագործությունները:

- Ոսկան ախպեր, սարեն կուգաս,
Սարի մարալ կըփընտրես.
Ասա՛, յարա՞ր դուն չըտեսար
Իմ մարալըս, իմ բալես.
Դարդի ձեռքեն սարերն ընկավ,
Իմ արևս, իմ բալես.
Գըլուխն առավ, քարերն ընկավ
Իմ ծաղիկս, իմ լալես…..

Օրագրային առաջին իսկ գրառումներից, անդրանիկ <<Երգեր ու վերքեր>> ժողովածուից սկսած Իսահակյանի սիրային պոեզիան ներկայանում է հոգևոր տարբեր ալեբախումներով, վերացարկվում տարբեր հնչեցումներով սիրո թրթիռ, տառապանք ու տանջանք, անկեղծ խոստովանանք,կարոտակեզ պոռթկում,ապա զգացմունքների հեղեղ՝ հոգի ծվատող անհույս մորմոք, կրակված սիրո բոց, հրդեհ, արնածոր սրտի վերք: Օրագրային էջերի վկայությամբ, տասնամյակներ անց անգամ մերժված սերը բանաստեղծը վերապրում է իբրև գալարվող, հոշոտող ցավ ու ողբերգություն. <<…Տիեզերքի խորությունն ուներ իմ սերը, որովհետև սիրտս խորն էր նույնչափ, և իմ տանջանքները անըմբռնելի էին ու մահաբեր… Սիրում էի արյունիս ամեն մի կաթիլով և մաքուր, ավելի մաքուր…Ես լացեցի՝ արյուն ու թարախ, քար ու արյուն լացեցի… Հոգուս վերքերը, հին, լայնաբերան վերքերը… Շուշիկը դաշույն ցցեց սրտիս մեջ, և մնում է դաշույնը, վերքը խորը, արնով լիքը, և ապրում եմ ամեն քայլափոխում արյան կաթիլներ ծորելով, հետքս արյունով ներկվեց,/Հ, 281,284/: Սիրո, կարոտի, սպասման մորմոքի միահյուսված զգացումը սիրած էակի ամուսնությունից հետո, ինչպես վկայում են մեջբերվող տողերը ևս, վերածվում են հոգևոր մոլեգին խռովքի, դառնաղի տառապանքի ալիքավորվող ելևէջների և լայնորեն բեկբեկվում նրա օրագրում և ստեղծագործություններում՝ իրական կենսագրական ազդակներով անդրադարձնելով նրա ըստ ամենայնի բարդ ու դրամատիկ հոգևոր կացությունը:

Հոգի կուտամ, հոգի տու՞ր ինձ,
Իմ նազելի աչագեղ: Սիրտս-սև
արտ, սերդ-ալ վարդ,
Թո՞ղ բողբոջի նա այնտեղ
Սիրտըս-գիշեր, սերդ-վառ աստղ, Թո՞ղ
շողշողա նա այնտեղ:

1892 /Իգդիր/

Նամակներից տեղեկանում ենք, որ Իսահակյանը մեծ սեր է տածել Շուշանիկ Մատակյանի հանդեպ, սակայն վերջինս, չնայած փոխադարձ սիրուն, մոր հորդորով ամուսնացել է ուրիշի հետ: Հոգին վեհ ու լուսե երազներով լի բանաստեղծը ապրում է խորը հիասթափություն, մերժված սիրո վիշտն ու տվայտանքը: Սիրո ցավից հոգին մորմոքող թախիծը անվերջ տանջում է բանաստեղծին, հոգին պարուրում կյանքի դառնության գորշ մրուրով: Շուշանիկի մերժված սերն է եղել Իսահակյանի բանաստեղծություններում արտահայտված սիրո տառապանքի ու վշտի ակունքը: Ցավը, որը մերթ պոռթկացել է, մերթ ծառս եղել , մերթ լռել անզորությունից, մերթ երազի թևին ձգվել մինչև տիեզերական տարածքներ:

Սեգ արծիվը աչքս է կտցում,
Աչքս կարոտ՝ Շուշանին. Անգութ
գայլը սիրտս է հանում, Սիրտս
ծարավ ՝ Շուշանին:
ՈՒ ճամփեն մութ- մոլորան,
Սև ծովի բոլոր կերթա.
Շուշան յարս ձեռքերն արյուն, Էն
տղի հետ հարս կերթա:

Անգութ աշխարհում իր ցավի տակ կքած բանաստեղծը շատ բան չէր ուզում, աշխարհի անմեկնելի հմայքներն ու գեղեցկությունները իր հոգում կլինեին, եթե միայն Արազի ափին իր

բոստանը լիներ, ուռենու տակ քողտիկը լիներ ու սրտով սիրած Շուշանը լիներ, իսկ ինքը ծով-քրտինք թափեր Շուշանի համար: Սակայն մարդկային կյանքի անգութ օրենքները փշրում են նրա վառ երազները, աստղե ոլորտներից թափում հույսերը, օրերի գորշ շղթայի մեջ չի մեղմվում ցավը, գնալով կարոտը ավելի է ուժգնանում և ափ որոնում… Տարիների գորշ շղթայում սիրո ցավից գալարվում է բանաստեղծի հոգին, վիրավորված սիրելիից ու նրա հարազատներից՝ օրերի պտույտի մեջ տառապանքն ու վիշտը չի մեղմվում, սիրո ծարավ հոգին անվերջ տենչում է Շուշանին:

Դու մերժեցիր ինձ, չրկանչեցիր ետ:
Եվ անցան տխուր, տարիներ տխուր. Եվ
հեռվից վախով, հույսերից թափուր,
Նայում էի քեզ, մենակ վշտիս հետ…

Բանաստեղծի հոգու ցավը կարող է մեղմել աստվածային սարսուռով համակված վայրկյանը սիրելիի գրկում. <<Մի վայրկյանը սոսկ՝ խրթին ու անհուն, ժամանակս անցած կդարձնի ինձ հետ>>: Սակայն բարդ է մարդկային հոգին, առավել քան արժանապատվությունն ու ինքնասիրությունը տրորված տղամարդու հոգին…

Շուշան աղջի՞կ, քու գերին եմ,
Կալ ու կապված անշղթա,
Սիրտս վառվավ սիրուդ բոցեն,
Պապաք-ծարավ էրվեցա:

Իսկ Շուշանը գավը ուսին
Դեպի ձորն է թռչկոտում, Աչք չի
քըցուն խեղճ տղին:

Ծով-աչքերիդ ծով-կարոտով
Շվաքդ եղա, ման եկա,
Օրերս անցան ախ ու վախով,
Ես հալ ու մաշ թել դարձա:

Իսկ Շուշանը աղբազովին
Կուրծքը՝ արձակ, հուսքն՝ արձակ,
Վարդ երեսն է լվանում:
Էս քարի պես ժեռ է հոգիդ, Էս
այրի պես՝ լուռ ու մութ.
Էրվեց, մոխիր դառավ գերիդ,
Ա՜խ, Շուշան ջան, ա՜խ, անգութ…

Իսկ Շուշանը գավը ուսին՝
Զուլալ ջուրն է տուն տանում, Աչք
չի քըցում խեղճ տըղին:

1892, հունիսի 6, Կարս

Օրագրային և բանաստեղծական տողերին զուգահեռ հավաստում է նաև զերզգայուն բանաստեղծի՝ կորցրած սերը խոշտանգված հոգով վերապրելու ծանրածանր զգացումը, հանգամանքը ,որը բնութագրում է նաև Իսահակյանի մարդկային անհատական նկարագիրը: Նրա սերը ներկայանում է որպես առասպելական սիրո ըմբռնում՝ օժտված այնպիսի մի ճակատագրական ուժով ու զորությամբ, որը հանկարծակի հայտնվում է և իր կործանարար

տարերքով գերի դարձնում մարդ արարածին: Համոզվելու համար համադրենք ոչ միայն իրենց խոսքով, ոգով ու շնչով, հանգով ու երանգով, այլև մարդկային տարբեր խառնվածքներ ունեցող նրա ժամանակակիցների առաջին սիրերգերը, ուր խոցոտված արժանապատվությամբ առանձնանում է Իսահակյանի հուշաշխարհը/ Հ. Թումանյան <<Հոգուս հատոր>>, <<Վ. Տերյան <<Էստոնական երգ>>/:

Իսահակյանի քնարերգության առանցքը ս ե ր ն է, որը , ինչպես բանաստեղծն ինքն էր զգում , պիտի լիներ իր ստեղծագործության փարոսը ամբողջ կյանքի ընթացքում: Դեռևս տասնութ տարեկան պատանի, և սիրո թագավորությունը իջնում է նաև այդ պատանի բանաստեղծի սրտին :

Ծաղիկ էի նորաբողբոջ,
Սարի լանջում , երկնի տակ. Ինձ
կըդյութեր առվի խոխոջ, Ինձ
կողջուներ արեգակ:
Գիշերները՝ աստղ ու լուսին
Վար կիջնեին երկնքեն,
Ու հեքիաթներ ինձ կասեին
Կախարդական , ոսկեղեն:
Գառների հետ լուսածագին
Եկար սարը , ջա՛ն աղջիկ ,
Ինձ քաղեցիր, դրիր անգին
Կրծքիդ վրա գեղեցիկ :
Այնտեղ շքեղ՝ ես ապրեցա
Երազներով երջանիկ.
Սերըդ դավեց ինձ , սևաչյա՛,-
Ես չորացա , ա՛խ , աղջիկ…

1891, մարտի 9 , Էջմիածին

Առաջին սիրո երջանկությամբ թևավորված պատանու համար աշխարհը տոն է , կյանքը՝ տոնահանդես: Նրա համար բնության ամենախիստ երևույթներն անգամ մեղմանում են , քնքշանում , թևեր առնում, լուսավորվում:

Ես երգիչ եմ – երկնի թիթեռ,
Ես զանձ չունիմ – լե՛ռ ու բե՛ռ.
Ես սիրում եմ ծաղիկ, աղջիկ,-
Ծաղկի բուրմունք, կույսի սեր.
Ես սիրում եմ մրմունջ- տրտունջ,
Տանջված սրտի երգ ու վերք:

1893, ապրիլ, Ալեքսանդրապոլ

Եվ ով էր նրա մեջ արթնացրել այդ նվիրական զգացմունքը , ում էին ուղղված նրա խենթացած սրտի մեղեդիները , ում համար էին երկնում նրա մտքի հորիզոնները: Շուշանիկ Մատակյան: Կին , որի համար Իսահակյանը պատրաստ էր փոխել բնության ողջ ներկապնակը՝ թողնելով միայն զմրուխտն ու վարդագույնը , խառնելու եղանակները՝ թողնելով միայն գարունը, և անգամ հանդգնելու՝ հրամայել Արարչին՝ կյանքը հավերժ դարձնելու…

<<…Երբ ես դեռ պատանի , երբ նոր աղջնակի սերը իմ կրծքում արձագանք տվեց , ես սիրեցի

Շուշիկին , ես սիրեցի նրան , ինչպես իմ մայրիկին , ինչպես գեղեցկությունը , ինչպես հայրենիքիս կապույտ լեռները, իմ ողջ էությունը երգի ու երազի թևերով հյուսեցի նրա համար , նրա համար միայն… >>:

Սիրահարված հոգու համար ամեն ինչ տիեզերական է , բայց ոչ իրականությունից դուրս: Բանաստեղծը երբեք չի ընկնում անկշռելիության վիճակի մեջ : Նրա զգացմունքը ապրող ու ապրեցնող է , ծնվում է սրտից և թանձրանում հոգու և բանականության ներդաշնակությամբ՝ առանց աղավաղվելու , առանց խաթարելու բնության ընթացքը:

Գիշերն եկավ, զով- հովն ընկավ ,
Աստղունք լուսնին ձայն տվին.
Լուսնյակն ելավ, մով-ծովն ընկավ ,
Հավքերն ինձի ձայն տվին:
Ես վեր ելա ոգի առած՝
Զարկի սրտիս լարերին.
Սիտս խնդաց , կուրծքս թնդաց-
Եվ լարերը խզվեցին…
Միայն սիրո լարը մնաց
Սրտիս անհուն խորքերում.
Ու վառ սիրո երգը շողաց
Կյանքիս ամեն ծալքերում…

1893, օգոստոսի 5, Արգինա

Իսահակյանի սիրո քնարերգությունը մի ամբողջ սիրավեպ է , ուր իրենց արտահայտությունն են գտել սիրո բոլոր նրբերանգները:

<< …Ամ Շուշիկի համար էի ապրում… կրթվում , սովորում ,գրում, ձի հեծնում , շոր հագնում, տխրում , քեֆ անում , արտասահման թռնում, երազում միայն նրա համար…>>

Հոգի կուտամ , հոգի տո՛ւր ինձ,
Իմ նազելի աչագեղ:
Սիրտս - սև արտ , սերդ - ալ վարդ,
Թ՛ող բողբոջի նա այնտեղ.
Սիրտըս - գիշեր , սերդ - վառ աստղ ,
Թ՛ող շողշողա նա այնտեղ:

Ժողովրդի սրտի երգն ու վերքը կարդացող , ժողովրդի տառապանքի լեզուն հասկացող բանաստեղծը միայն կարող էր գրել ժողովրդին այդքան հարազատ ստեղծագործություն , որի յուրաքանչյուր հնչյունը , նոտան , շունչը պիտի դառնային ամոքիչ ու ոգևորող, իմաստավորող մեղեդին , ինչի հոգեհարազատ ելևէջների մեջ յուրաքանչյուրը պիտի վայելեր իր սերը , ապրեր իր տառապանքը, գտներ իր սփոփանքը, ճանաչեր իր թուլությունները, զգար անսահման կարոտի թանձրությունը , մերժման ցավի ուժը , հուսար , հավատար… ու այս ամենի հետ երբեք նահանջի ճանապարհ չփնտրեր…

Կենսական ծովի հույզերի միջին
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր .
Կայծակն է զարկում իմ վեհ ճակատին,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
Հողմ ու փոթորիկ շուրջս են հածում,

Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
Գոռ ալիքները կուրծքս են ծեծում,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
Ինձնի՛ց բռնեցեք, խորտակվող մարդիկ,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր,
Ձեր խարիսխները ոտքիս տակ ձգեք,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:

1894, մայիսի 29, Լայպցիգ

Եվ մի՞թե սա << հանճարի ճակատագիր>> չէ, հանճարի, ում ամենափխրուն ու խոցելի սիրտը, որ << ժայռի նման ամուր է>>, որ անվարան հուսադրում է խոր- տակվող մարդկանց, հանկարծ սիրո սառը քամուց կծկվում, մարում է, ցավից փոքրանում, կարոտից սպառվում է...

Արտուտն՝ ուսին, վարդը՝ սրտին,
Գարունն եկավ, ջա՛ն գարուն,
Տուղտը՝ ծոցին, աստղը՝ ճակտին,
Գարունն եկավ, ջա՛ն գարուն...

Արտուտն անուշ երգում է սեր,
Սիրտըս լու՛ռ է, քանց ձըմեռ,
Էս ի՛նչ կարմիր վառ արև՛ է,
Սիրտըս մու՛թն է, քանց գիշեր:

Բնությունը սկսում է կորցնել իր գույները, մեղեդին դառնում է բանականությունը աղոցող մի աղմուկ, հոգու մեջ իրարանցում է սկսվում, բախումները հաջորդում են մեկը մյուսին:
Շուշանիկի մերժումը մահվան դատավճիռ է հնչում բանաստեղծի համար: Նա դեռ հույս ունի ստանալ իր սիրո պատասխանը, որ ի սկզբանե ցավ ուտառապանք էր եղել իր համար: Անձնական ցավի, անհատի տառապանքի ու մորմոքի ձայնը շուտով արձագանքում է նրա մի շարք բանաստեղծություն ներում:

Երազ տեսա - ձեր տան առաջ
Զուլալ աղբյուր կըբխեր,
Ձենը մեղմիկ, քաղցրակարկաչ,
Չորս դին ծու՛փ- ծու՛փ ծաղկունք էր:
Ջուր խմելու դուռըդ եկա,
Պապակ էի ու ծարավ,
Ջինջ աղբյուրը, մեկ էլ տեսա,
Ցամաք կտրավ, քար դառավ:
Քընից զարթնա,- սիրտս էր տրտում.
Ա՛խ, էս շա՛տ վատ երազ է.-
Ծարավն՝ ես եմ, աղբյուրը՝ դուն.
Սերդ ինձ համար ցամքել է:

1894, նոյեմբեր, Լայպցիգ

Շուշիկի ամուսնության լուրն իմանալուն պես նույն օրը գրում է <<Դարդս լացեք>> բանաստեղծությունը: Բանաստեղծի հոգու դրամային հաղորդակից են լինում և՛ բնությունը, և՛ տիեզերքը, որոնք, դեռ երեկ, մասնակցում էին նրա սիրո զարթոնքի արբեցումին...

Դա՛ դդրս լացեք, սարի սըմբուլ,
Ալվան – ալվան ծաղիկներ.
Դա՛ դդրս լացեք, բաղի բլբո՛ւլ,
Ամպշող երկնուց զով – հովեր:
Երկինք – գետինք գլխուս մթնան,
Անտուն – անտեր կուլամ ես.
Յարիս տարա՛ն - ջանիս տարա՛ն,
Հոնգո՛ւր – հոնգո՛ւր կուլամ ես...
Ա՛խ, յարս ինձի հանեց սըրտեն,
Անճար թողեց ու գընաց.
Սըրտիս սավդեն – խորունկ յարեն
Անդեղ թողեց ու գընաց:
Դա՛ դդրս լացեք, սարի սմբուլ,
Ալվան – ալվան ծաղիկներ,
Դա՛ դդրս լացեք, բաղի բլբուլ,
Ամպշող երկնուց զով – հովե՛ր:

Այս զգացումը զորանում, խորանում, ծավալվում է, խփվում բանաստեղծի սիրո ափերին, փշուր – փշուր լինում, բեկոր- բեկոր խրվում նրա հոգու մեջ, վերքեր բացում, ցավեցնում...

<<...Հիմա անմխիթար, անբովանդակ կուրծքս տրորվում է...,, լու՛յս, լու՛յս, լու՛յս,, է ուզում լուսո աղբյուրից՝ սիրո անդարձ, անզեղջ, անսիրտ հիշատակից... Ա՛խ, եթե ,, նա,, ինձ այժմ սիրեր, գոնե ես այն գիտակցությունն ունենայի, որ նա ինձ լոկ միայն համակրում է, որքա՛ն ոգևորված, հուսադրված կլինեմ. Ապրեմ, սովորեմ, գործեմ առանց հոգնելու, առանց ընկճվելու ... >> /1893, <<Հիշատակարան>>/

- Մութը գրկած գետ ու գետին
  Հով ու ալիք կըշնչեն.
  Երկինք գրկած աստղ ու լուսին,
  Արտերն անդորր կրննջեն:
  Սիրտս, սիրտս թույլ կզարկե,
  Սեր ու երգեր է՛լ չկան.
  Նոր էր ծլել, արև սիրեց,
  Արև- աչեր է՛լ չկան:

Վառ աստղերը երկնից ընկան,
Վարդ ու շուշան թառամեց.
Ա՛խ, իմ կյանքս, անուշ կյանքս,
Կտոր-կտոր փշրվեց...
Հովն ու ալիք կուգան, կերթան,
Ցաված սիրտս կշոյեն,
Ու իմ սիրուս մրմունջներից

Տխուր երգեր կիյուսեն ...

1893, հուլիսի 24, Ղազարապատ

Ուժգնացող ցավը անկառավարելի է դարձնում բանաստեղծի զգացմունքները, քանդում է նրա համբերության հունները. *<< ...Ա՜խ... սիրուս ամենատաք ժամանակում ես ապրում էի, ո՜չ, ո՜չ, ես շնչում էի կյանքի հրդեհով, տաք, աշխույժ հոսանքով շարժվում. ես այրվում էի և կյանքը շա՜տ սիրում... Իսկ այժմ ցուրտ է և տաղտուկ... Եվ հենց դրա մեջն է իմ ոչնչությունը, որ ես ակամա ոչնչանում եմ, գիտենալով, որ ուժ ունեմ կրկնապատիկ ապրելու՝ ոչնչությունը հաղթելու.... >>*

Սիրո և ցավի դրսևորման այսպիսի արտահայտությունը հուզական բացառիկ տարերքի անխուսափելի ծնունդն է: Որքան մեծ է բանաստեղծը, այնքան զորեղ են հույզի ալիքն ու սրտի ասելիքը:

Սիրեցի, յարըս տարան.
Յարա տվին ու տարան.
-Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սիրտըս պոկեցին, տարան:
Ցավըս խորն է, ճար չըկա,
Ճար կա, ճար անող չըկա.
Էս ի՞նչ դուլում աշխարհ է,
Սրտացավ ընկեր չըկա:
Լավ օրերըս գնացին
Ափսո՜ս ասին, գնացի՜ն.
-Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սև դարդերս մնացին...

<<... Ոչ թե գրել, այլ երգել եմ Օդեսայի դաշտերում,- բանաստեղծության մասին գրել է Իսահակյանը ,- ժողովրդական մի երգի եղանակով, և ապա միայն գրի առել>>:

Դառնացած բանաստեղծն ընկնում է հուսահատության գիրկը. *<< ...Ի՞նչ գրեմ – արցունք, տանջանք, վիշտ, հեծծանք ...*

Թառամեցան ծաղիկները, հանգան կայծերը, ձմեռն եկավ. բուք- բորան, մառախուղ, մռայլ, անապատ, անպա՜տ առանց օազիսի. ու՞ր է անդրանիկ սերը, սերը պղատոնական, մաքու՜ր, անարա՜տ, կուսակա՜ն ... ու՞ր է, ու՞ր ...

Ես լալիս եմ, ես տանջվում...

....Եվ մի՞թե կա երջանկություն աշխարհի մեջ. ո՜չ, ո՜չ, նա ինքնախաբեություն, ինքնամոռացություն, եսականություն է ...

Ա՜խ, ես թշվառ եմ,, ես ապերջանիկ. չկարեկցեք ինձ վերա, ես փոգրոգի չեմ, ես հաղթված չեմ կյանքի կռվից: Չկարեկցե՛ք... >>

<< Հիշատակարան>>

Նրա հոգու խռովքը փոթորկում է ողջ էությունը, տիրում նրա բանականությանը, կուրացնում լավատեսությունը: Հուսալքության ալիքը հոխորտում, քանդում է սիրո ապարանքը: Եվ առաջին անգամ հոռետեսությունը կլանում է բանաստեղծին, խլում նրա ողջամտության վերջին հնարավորությունը....

<<Նորից վեր եմ առնում գրիչս, թաթախում եմ հիվանդ, արյունոտված սրտիս մեջ և գրում եմ քեզ, Շուշիկ, մի քանի տող, գրում եմ ես՝ Ավետիք Իսահակյանս: Ինչու՞ եմ գրում, ի՜նչն է

ստիպում ինձ գրել .- սիրել – ես քեզ չեմ սիրում, ատել- ես քեզ չեմ ատում. բայց դու իմ հոգում կաս՝ որպես մի ծանր երազ, որպես մի դժբախտություն,
մի կոշմար. ես ուզում եմ քեզ հոշոտել, ես ուզում եմ քեզ հազար - հազար անգամ սպանել, սպանել , նորից սպանել , կենդանացնել՝ նորից սպանել, հավիտյան ապրել և քեզ հավիտյան սպանել , բայց այդ չեմ կարող անել (անզոր եմ քեզ), ամբողջ էությունս բարի է... և որ ամենաողբալին է՝ ես դեռ քո ճիրաններում եմ. ի՞նչ անեմ , ինչպե՞ս ազատվեմ . երբեմն քեզ ատում եմ ծովաչափ, ծովաչափ, և երբեմն սիրում ե մ և պատրաստ ոտքերդ համբուրելու, բայց որ հիշում եմ անցյալը, ես մրրիկ եմ դառնում:
Դո ւ մի որոնիր այս տողերի մեջ որոշ միտք, որոշ իմաստ. ես գրում եմ համարյա կիսախելագար, և մինչև մահս քեզ էլ ոչ մի տող գրելու չեմ, և աչքերիդ նայելու չեմ, Աստված է վկա. վերջին անգամ պիտի լամ քու առաջ և հայհոյեմ քեզ, հայհոյեմ,- հայհոյեմ քո բոլոր սրբությունները, որովհետև դու ինձ չարչարեցիր , նահատակե – ցիր՝ անսահմանորեն:
Դու ասում էիր ինձ , որ ինձ չես սիրել- գիտե՜մ , գիտե՜մ, բայց այդ քեզ իրավունք չէր տալիս , ինձ՝ երբ ես քու ոտքերի տակ տիեզերական սիրուցս ստորացած ընկած էի,-ծաղրելու , արհամարհելու, դուրս շպրտելու. չէ՞ որ , Շուշիկ ջան, ես մ ա ր դ էի... >>:
Երբեք լալկանություն չենք կարող համարել բանաստեղծի այս անկեղծացումը , որքան էլ նա լա , բողոքի հայհոյի, միևնույն է, սերն է խոսում նրա մեջ , սերն է դարձել հոգու տարերքի իններորդ ալիքը: Եվ որքան սաստկանում է քամին, այնքան ուժգնանում են ալիքների շառաչը, որոտը :
<<... Ես զզվում էի, բայց և անդիմադրելի կերպով սիրում էի. ա՜խ , ամբողջ 13 տարի դու նստել ես ու բռնել իմ ողջ , ողջ ուղեղը, հոգին և սրբապղծել իմ ողջ երկինքը... Դու ինձ արնաքամ արիր, գուցե ակամա , դու սպանեցիր իմ տաղանդը , դու ինձ մղեցիր ամենածանր, դառն հուսահատության , երբ ես ամբողջապես թաթախված ինքնասպանության ծանր մտքերով, հանկարծ սթափվեցի....
...Շուշիկ, ատելի , սիրելի Շուշիկ, ուրիշ կերպ ես չէի կարող վարվել. ես պիտի քեզ անպատվեի, վայր գցեի, որ կարողանայի ազատվել այդ հրեշային սիրուց, որ ինձ ծծեց, կամ սպանեի ինձ. սպանել չուզեցա, որովհետև բնությունն իմ մեջ շա՜տ է կյանք և կյանքի ուժ ու սեր դրել, բայց հայհոյել կարողացա, իհարկե, ավելի լավ էր մեռնեի, քան հասնեի այն օրին, որ իմ դարեր դարեր պաշտածերազը սրբապղծեի , ոտաց տակ տայի... Բայց այս բոլորի մեղավորը դու ես:
...Բայց լալիս եմ հիմա, և սրտիցս արյուն է կաթում. գնա՛, Շուշիկ, Աստված քեզ հետ, ապրիր քո երեխաների համար. ինձ մի՜ անիծիր, իմ անունս երբեք, երբեք մի՜ հիշիր և ոչ մի տեղ...աղաչում եմ քեզ. ինձ թաղիր քեզ համար հավիտյան , ինձ երբեք մի նայիր. ազնիվ խոսք տուր այդպես վարվելու....
ԱՂԱՉՈՒՄ ԵՄ ՔԵԶ...
ԵՄ ԷԼ ԿՎԱՐՎԵՄ ՔԵԶ ՀԵՏ ԱՅԴՊԵՍ;
ԴՈՒ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԵՌԱ՜Ր՝ ՄԵՌԱ՜Ր...
ԱՐՏԱՍՎԵԼՈՎ ՀԱՄԲՈՒՐՈՒՄ ԵՄ ՔՈ ԳԵՐԵԶՄԱՆԸ
ԵՎ ՃԱՄՓԱ ԸՆԿՆՈՒՄ
ՆՈՐ ԱՍՏՎԱԾ ԳՏՆԵԼՈՒ

Ավետիք>> 1904թ

Քնարերգուն քիչ- քիչ հանդարտվում է, փորձում է հաշտվել, հարմարվել: Չէ՞ որ բնությունը նրա մեջ անսահման կյանք էր դրել, ապրելու տենչ: Հիասթափության ցնցումը նրան սթափեցնում

է : Նա ուզում է նոր հորիզոններ նվաճել: Խաղաղ, բայց ոչ միապաղաղ հոգու որոնումների ճանապարհն է բռնում բանաստեղծը:

Քեզ չըտեսնել ուխտել էի.
Բայց , ախ, նորից հանդիպա,
- Քույրի՛կ, վերքս լավ է հիմա,
Մի սև սպի տեղը կա .
Էն սև սպին սև ամպի պես
Անցուց դեմքը արևի ,
Ու ման կուգամ սև շուքի պես
Սարեր ձորեր ամայի ...

1899

Նավաբեկությունից ափ նետված նավավարը սթափվում է , կյանքը գնահատում, ճանանչում արարող ու ստեղծագործող մարդուն, դառնում իր իսկ պաշտպանը, արժևորում ձեռքբերումները:

Մերժված հոգու որոնումների մեջ նա կրկին տեսնում է մի լուսավոր հեռու , հավատում, որ այդ լույսը իր նոր աշխարհի արևն է:

<<...Դու հարցնում ես՝ վիշտը սրտիդ մեջ սնուցանելով, թե վճռիր իմ տատանմունքս... ես միայն այս կասեմ քեզ և այս միայն մի անգամ կասեմ և ամբողջ կյանքիս մեջ միայն մի անգամ կասեմ քեզ:- << Ես սիրում եմ քեզ, Աննիկ, Աննիկ ջան, իմ շատ սիրելի Աննիկ ... >>

Եվ այս իմ հոգու խորքից քեզ խոստովանելուց հետո՝ այսուհետև քեզ ամեն ինչ պարզ պետք է լինի... ասա՛, ի՞նչ կարող է անել սիրող սիրտը, ինչի՞ առաջ կանգ կառնի սիրող սիրտը. ես անկարելին կարելի կդարձնեմ քեզ համար... ես արևը, աստղերը, ամբողջ աշխարհը կնվիրեմ քեզ. ես իմ կյանքս, իմ կյանքս կտամ քեզ. ուրիշ ի՞նչ ես ուզում, մի՞թե այսուհետ կարող ես դու տատանվել, կասկածել դեպի ինձ:

Դու դեն շպրտիր քու թանկագին գլխից այն վատ մտքերը՝ թե ես նմանություն եմ գտնում քեզ քու քրոջ հետ. աստված չանե, որ դու նրան նման լինիս. նա չար է, նա անսիրտ է, իմ ապրած հոգին զգաց քու մեջ մի երկնային հոգու ներկայությունը. մի չքնաղ մաքրություն. ես կարոտ եմ այդ հրեշտակային գուրգուրանքին և անմեղութ-յան... Ապրիր այսուհետև՝ հենված իմ գրանիտե սրտի վերա, երգիր երկնքի ու ջահելության երգերից. պարիր ամենաբուռն ոգևորությամբ, քաղիր ամենաշքեղ ծաղիկները, երազի՛ր ամենաչքնաղ երազները. սիրի՛ր երկինքը, մարդիկ, աշխարհը և ամենից շատ սիրիր ինձ...

Բարի գիշեր և կարոտով բարևներ իմ սիրելի, իմ թանկագին, իմ պայծառ Աննիկին.

միշտ քեզ անձնվեր քո և քո Ավետիք >>

1904, Թիֆլիզ, Աննա Մատակյանին

Իսահակյանի սիրո դեգերումները կարծես անվերջ փնտրտուքների մեջ են: Նրա հոգին փնտրում է հաստատուն մի հանգրվան, որտեղ ներդաշնակվելու են երկնային սիրով շաղկապված երկու սրտեր, որոնց ոչինչ և ոչ ոք ի զորու չէ խանգարելու: Բայց միշտ գտնվում են մարդիկ, որոնք պատրաստ են խանգարելու բնության ստեղծագործության կատերելությանը...

<< ...Դու նազ ես անում,լարում ես քու հիմար կապրիզները... որովհետև, որովհետև դու ինձ չես սիրում, և չես կարող սիրել, իսկական սիրո համար քու սիրտը շա՛տ է մանր ու երեխայական, ծով չի տեղավորվի այնտեղ: Եվ մի մոր կամ մի սադայելի խոսքը կարող է

դատարկել սիրտդ սիրուց…ի՞նչ է, շա՜տ ստորացա քեզ մոտ, որ խոստովանեցի, թե սիրում եմ. չէ՞որ միայն զորեղ սերը լեզու ունի, և սրտից թռնում է դուրս՝ ինչքան էլ ուզենա ծածկել, և փոխանակ իմ ծովածավալ սերը պաշտելու և երկրպագելու ինձ, դու ջղային խաղ ես դարձնում մեր զգացմունքները, մի օր այսպես ես ասում, մի օր այնպես, երբեմն մի ժամում մի քանի տեսակ. ես ժամանակ և համբերություն չունեմ այս սրտի խաղը տանելու. իմ ժամանակը թանկ է, կյանքս օգտակար, և ինձ հարկավոր է հոգեկան, սրտի հանգստություն և մխիթարություն >>:

Իր անցած դժվար ճանապարհին բանաստեղծը հոգու մի քաղցր, անդավաճան, ջերմ ու սիրառատ հանգրվան է փնտրում, որտեղ կարող է իջևանել տիրոջ լիիրա – վությամբ, ապրել հոգու անդորրը, զգալ նրա տիեզերական բաբախումները: Միայն կյանքով լեցուն, կյանքը սիրող մարդու համար է աշխարհն այդքան գեղեցիկ: Եվ այդ գեղեցիկ կյանքն ապրելու, ստեղծագործելու, արարելու ուժը, ցանկությունը ծնվում են՝ որքան հոգով զգայուն, նույնքան կամքով ուժեղ մարդու մեջ :

<< …Ես զուր եմ հուսահատվում… ոգևորվեմ իմ նպատակներով՝ ստեղծեմ նշանավոր հանճարեղ երկեր, երկնեմ երգեր…Թո՛ղ թափառեմ, լինեմ մերկ, քաղցած, անտուն, անտեր, անփող, խենթ, ցնորամիտ, բայց ապագան իմս է…

Օ՜ն, ուրեմն աշխատե՛լ, անվե՛րջ և անխո՛նջ >>:

<<Հիշատակարան>>

Մի մրահոն աղջիկ տեսա
Ռիալտոյի կամուրջի
Հորդ մազերը- գետ գիշերվա,
Եվ հակինթներ՝ ականջին:

Աչքերը սև- արևներ սև,
Արևների պես անշեջ,
Գալարում էր մեջքը թեթև
Ծաղկանկար շալի մեջ:

Աչքս դիպավ աչքի բոցին,
Ու գլուխս կախեցի.
Ժպտաց ժպտով առեղծվածի,
Հավերժական կանացի:

Միամիտ չեմ՝ հավատամ քեզ.
Տառապանքս փորձ ունի.-
Մի մրահոն կույս էր քեզ պես,
Կոտրեց սիրտս պատանի…

1925, Վենետիկ

<< … Ամառները հաճախ մեզ մոտ էր գալիս նաև Իսահակյանը: Գրեթե ամեն երեկո Իսահակյանը՝ թիկնոցն ուսերին , ձեռնափայտը ձեռին, մի երկու ընկերոջ կամ բարեկամի հետ բարձրանում էր վեր՝ երեկույթներին, ներկայացումներին կամ պարերին ներկա լինելու:…Նա ինքը այդպիսի տեղերում չէր պարում, իհարկե, բայց սիրում էր ժամերով նայել պարողներին, երեմն և խրախուսել ծափով ու խոսքով: Սի- րում էր , հատկապես, հայկական ժողովրդական պարեր: …Իսահակյանն ինձ թվում էր շատ զվարթ շատ կենսուրախ մարդ, և ես տարակույսով

մտածում էի, թե հապա ինչու՞ իր բանաստեղծությունների մեջ այնքան ,, ախ ու վախ,, և ,,դարդ,, ունի: Մարդու և նրա ստեղծագործության տարբերությունը շատ մեծ էր, ուստի և երբեմն թվում էր ինձ, թե այդ տխուր բաները նա չի գրել…Երբեմն էլ մտածում էի՝ հետաքրքիր է իմանալ, թե, ուրախ մարդ լինելով, ինչու՞ այդպիսի տխուր բաներ է գրել:
Ուստի և Իսահակյան մարդը և նրա պոեզիան մնում էին ինձ համար առեղծված>>

Ստեփան Զորյան << Հուշերի գիրք>>

Գիշերն երազով, զօրը կարոտով՝
Նազելի տեսքիդ մընացի անհաս.
Աշխարհը հարբեց քո անուշ հոտով,
Մենակ ես քեզնից մընացի անմաս:
Ա՜խ, գոնե տեղրդ վարդեր ուղարկի՛ր,
Համբուրեմ, դընեմ մարած աչքերիս,
Գոնե վարդերիդ փշերն ուղարկիր,-
Համբուրեմ, գրգվեմ սիրավառ սրտիս…

Տարիների ընթացքում, իր մեջ խմորելով սիրո, նվիրումի հավերժության գաղափար- ները, Իսահակյանը մերժվածության ցավը փորձում է փարատել սիրո հավերժության բանաստեղծական հավատով: Հենց այս հավատի հավաստիացումն է << Հավերժական սերը>> բալլադը, ուր խտացված է Իսահակյան – հանճարի սիրային քնարերգության ողջ փիլիսոփայական խորհուրդը. սերը հաղթում է մահին…

- Բարձր են եկնի ձեղունները , նազելի՛ս ,
Բայց իմ սերը բարձրաբարձր է նրանցից.
Խոր են երկրի հիմունքները, նազելի՛ս ,
Բայց իմ սերը խորախոր է նրանցից:
…. Ժամանակը իր վախճանին կհասնի
Եվ արևը մի բուռ մոխիր կդառնա,
Բայց իմ սերը վախճան չունի, հուն չունի,
Նա հավերժ է, նա անշեջ է, նա անմահ…
… Եվ ավազուտ շիրմի վրա մենավոր
Աշտարակն է մնում կանգուն ու վկա,
Որ իմանան վառ աստղերը հեռավոր
Էլ - Սամանի սերը հզո՛ր ու անմահ:
Որ աշխարհին պատմեն սերը հաղթապանծ,
Էլ- Սամանի սերը՝ անանց, հավերժո՛ղ,
Քարավաններն ու ճամփորդներն երկյուղած
Հեռուներից հեռուն եկող – գնացող…

1914, Բեռլին

Լինում են պահեր, երբ մերժվածության տառապանքը, նյութապաշտ աշխարհում մարդու բոլոր հոգեկան մղումների արժեզրկումը սասանում են բանաստեղծի հավատը ամենահաղթ այդ զգացմունքի՝ սիրո հանդեպ: Եվ նա կրկին դառնությամբ եզրակացնում է.

…Ավա՜ղ, լուսնի տակ և վեհ բան չըկա,
Ամեն ինչ կոպիտ , բիրտ անասնական.

Աննյութ , անմարմին , անկիրք սեր չկա,
Ա՜խ մաքուր սերը երազ է միայն:

1903, Ալեքսանդրապոլ

Եվ ահա ձգտելով այդ <<աննյութ, անմարմին, անկիրք>> մաքուր սիրո իդեալին՝ մարդիկ հաճախ զոհվում են: Այս մտորումները բանաստեղծին հանգեցնում է խոր ընդհանրացման. հոգեկան վայելքը ոչ այնքան իրականացված սիրո մեջ է, որքան սպասման ու հավատի…

-Այդ ի՜նչ սեր է,- ասաց աղջիկն ասպետին,
Քաջ ես, գիտե՛մ, գիտե՛մ , չկա քեզ նման.
Դու կարող ես տիրել արար աշխարհին,
Բայց դա երբե՛ք հզոր սիրու չէ՛ նշան:

–Ինչպե՜ս հայտնեմ սրտիս հուրը, նազելի՜ս.
Կուզե՞ս պատռեմ կուրծքս հիմա այս սրրով,
Ոտներիդ տակ նետեմ սիրտս սիրով լի,
Մեռնիմ ուրախ ու բախտավոր՝ քո սիրով:
… - Այդ չէ՛ սերը, ասաց աղջիկն ասպետին,
Գիտե՛մ, քաջ ես, բայց շա՜տ վախկոտ թույլեր կան,
Որ հուսահատ՝ քաջի նման կըմեռնին,
Բայց այդ երբեք անշեջ սիրու չէ՛ նշան:
- Թե կսիրես, թո՛ղ ինձ հիմա ու գնա՛,
Ու ականջ դի՛ր, մի օր դուռդ կըբախեմ:
Այսպես ասաց, ու իր ծոցեն մարմարյա
Նետեց նրան մի հատիկ վարդ հրեղեն:
… Եվ թև առան , թռան օրեր ու տարիք,
Վառ կտրիճը դառավ դողդոջ մի ծերուկ,-
Ու երբ մահը դուռը բախեց զարհուրիկ,
Հանեց ծոցեն վարդը խամրած ու դալուկ:
Սիրու վարդը աչքին դրեց փափագով,
Ու համբուրեց, ու համբուրեց , ու… մեռավ՝
Հոգին լցված բլբուլների երգերով.-
Եվ զրույցս էլ ա՜յսպես տխուր վերջացավ…

1917, Ժնև

Վարդը սիրո երջանկության խոստումն է, որին որքան մոտենում ես , այնքան նա հեռանում է: Մնում են հավատն ու սպասումը, որոնց անկեղծության ու ինքնաբուխության մեջ է թաքնված հոգու լույսը, հոգեղեն երջանկության աղբյուրը: Եվ այդ սպասման ու հավատի շնորհիվ է վարդը՝ թեև դալկացած ու խունացած, մնում անթառամ:

Մեկ անգամ ևս զգում ենք մեծ քնարերգուի մտքի տիեզերացումը՝ սիրո իսկական երջանկությունը ճաշակելու համար պետք է << գոլորշիանալ, ոգիանալ, աստվածանալ ու հավերժանալ>> :

Կենսասեր ու կենսախինդ բանաստեղծի ներկապնակը գտնում է իր կյանքով լի գույները ,որի մեջ նա առանձնացնում է միայն իրեն ցավեցնող ու շատ սիրելի մի գույն, որին ոչ մի երանգ,

այդպես էլ, ամբողջ կյանքում չներդաշնակվեց…

Եվ սերըդ սիրտըս կարևեր խոցեց,
Վերքիս այս, քու՛յր իմ, դեղ-դարման չըկա.
Սիրուս արցունքով աշխարհ թաթախվեց,
Բայց դո՛ւ մնացիր օտա՛ր, անըզգա…
Եվ ուր լինում եմ, քու սերն եմ երգում,
Սիրտըս դեպի քեզ թռչում է հավերժ.
Ուրիշին գըրկած՝ ես քեզ եմ զգում,
Ուրիշի գրկում,- բայց քոնն եմ հավերժ…
Եվ դու հավիտյան անհաս աստղի պես
Ինձնից հեռո՛ւ ես, ինձնից հեռու՛ ես…

Եվ տաղանդավոր, վաստակաշատ բանաստեղծը, կարեվեր խոցված, սիրո հնոցում թրծված կնամեծար այրը չդադարեց երգել կնոջ՝ այդ << շատ սիրելի և նույնքան ատելի արարածի աստվածային գեղեցկությունն ու հմայքը, տիեզերական կերտվածքը…>>.

Կուզենայի, երբ կրկին
Գամ հոգնաբեկ ուխտավոր
Նվիրական քո շեմքին,-
Տեսնել այնպես նորից քեզ,
Ինչպես տեսա, սիրեցի,
Սիրեցի քեզ սրտակեզ:
Շնորհներով կուսական,
Աչերիդ մեջ նըվիրում,
Խոստումներով դյութական.
Ճակատըդ լույս ու ճաճանչ,
Եվ ժպիտով հոգեթով
Եվ ձայնիդ մեջ՝ սիրո կանչ:
Շուրջըդ՝ գարնան բույր ու ցող,
Շուրջըդ՝ կարկաչ ու կանանչ,
Եվ երազներս ոսկեշող:

1925, Վենետիկ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նամակներում և բանաստեղծությունների մեջ արտացոլվում է իսահակյանական սիրո փիլիսոփայությունը, որը որպես երազանք դառնում է իրականություն, կորցնում է իր առեղծվածային ուժը: Իսկ <<թափառելու և չգտնելու>> տեսությունը Իսահակյանի մոտ առաջացել է սիրելիին կորցնելու մտավախությունից,ուրեմն նրան ունենալու միտքը թող անիրական լինի, միշտ երազի թևերին լինի, քան բախվի դաժան իրականության ալիքներին:<<Մեր սերը թող լինի ոչ այս աշխարհից, հողեղեն չլինի, սիրենք իրար հեռավոր աստղերի պես. Իրարուց հեռու, իրար սրտի մեջ…Մի աշխատի ինձ տիրել, մեռցրու այդ նյութեղեն սերը, հոգով սիրիր, մտքով սիրիր…Սիրիր ինձ և հանուն այդ լավ սիրո թող ես թռնեմ, թափառեմ, առանձնանամ, մտածեմ, լավ հոգի դառնամ…>>:

Այս <<զուլում աշխարհից>> դառնացած բանաստեղծը իր հոգու ճախրանքը տեսնում է միայն երկնազարդ բարձունքներում, տիեզերական ոլորտներում, աստղերի գրկում, ուր մարդկային չար ու նենգ օրենքները անզոր են փշրելու գեղեցիկն ու վեհը, կատարյալն ու լուսավորը… Սիրո ցավից բզկտված այս հոգին մերժում է երկրային հույզերը, մարդկային զգացմունքները, նրա հոգին փշրվում է սիրո մերժումից ու հնչում են հուզաթոթով խոսքեր: Սրտի վիրավոր զգացումները, լուսավոր պատրանքը, բազմազան տրամադրությունները ու պատկերները հավաքվում,ձուլվում են իրար՝ դառնալով մեծ կյանքի պատմություն՝ հավերժող ցավերով ու հույզերով…: Իսահակյանի՝ քնարական բազմախորհուրդ ելևէջներով հյուսված բանաստեղծությունների ներքին թրթիռները բացահայտվում են նամակներում արտահայտված հոգեվիճակների և մտորումների օգնությամբ: Անձնական նամակները խոսում են բանաստեղծի ներաշխարհի ներքին թրթիռների մասին: Իսահակյանի նամակները օգնեցին հասկանալու բանաստեղծի խորապես անհատական երգերը՝ կենսափիլիսոփայությամբ, հոգեբանական տարերքով, պատկերների բնույթով: Նամակ-բանաստեղծություն. զուգահեռ հասկանալի է հուզական և խոհական ներքին այրումից շիկացած մթնոլորտում ծնված բանաստեղծությունները՝ ապրած հույզերի, ցաված սիրո չքնաղ հեքիաթները:

Գրականության ցանկ

1. Ավ. Իսահակյան << Երկերի ժողովածու>>, հ.1-ին, Երևան 1973, հ.6-րդ, Երևան 1979
2. Ավ. Իսահակյան <<Հիշատակարան>>
3. Ստ. Զորյան <<Հուշերի գիրք>>
4. Հրանտ Թամրազյան << Բանաստեղծության հազարամյա խորհուրդը>>
5. Լևոն Հախվերդյան <<Իսահակյանի կյանքն ու գործը>>, Երևան-1974